ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» դեկտեմբերի 2011թ. N--Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀԽՍՀ ԱՐՎԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N551 որոշմամբ՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է*՝

Տալ համաձայնություն ՀԽՍՀ արվեստի առաջին վաստակավոր գործիչ Գարեգին Լևոնյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բայրոնի փողոցի հ.12 շենքի ճակատային հատվածում տեղադրելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Նախագծի հեղինակ՝

Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի
մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

Աննա Ասատրյան

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԽՍՀ ԱՐՎԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում ՀԽՍՀ արվեստի առաջին վաստակավոր գործիչ, արվեստաբան, բանասեր, պատմաբան, մատենագետ, հրատարակչական գործիչ, խմբագիր, պրոֆեսոր Գարեգին Լևոնյանի (1872-1947) ծանրակշիռ ավանդը խորհրդահայ արվեստագիտության և գրականագիտության զարգացման գործում:

Գուսան Ջիվանու որդի Գ. Լևոնյանը, ողջ կյանքը նվիրելով հայ ժողովրդի նյութական և հոգևոր արժեքների ուսումնասիրությանը, քննության է առել արվեստի ու բանասիրության տարբեր մարզերի այնպիսի հարցեր, որոնք մինչ այդ կամ բոլորովին չէին հետազոտվել, կամ հետազոտվել էին մասնակիորեն: Գ. Լևոնյանը երբեմն հանդես է գալիս ոչ միայն որպես տվյալ բնագավառի ***առաջին*** ուսումնասիրող, այլև ***տեսաբան*** (աշուղագիտություն, մատենագիտություն, կիրառական արվեստի պատմություն նն):

Հայ արվեստաբանության մեջ Գ. Լևոնյանն **առաջինն էր,** ով փորձ արեց ի մի բերել հայ արվեստի պատմությունը: Մնայուն արժեքներ են <<Արձանագործությունը և քանդակը պատմական Հայաստանում>. (1937), <<Պարարվեստը հին Հայաստանում>> (1940), <<Թատրոնը հին Հայաստանում>> (1941) և այլն: Իսկ աշուղագիտական աշխատությունները՝ <<Հայ ժողովրդական և աշուղական երգերը և նրանց փոխհարաբերությունը>>, <<Սայաթ Նովա>>, <<Աշուղները և նրանց արվեստը>>, դրեցին աշուղական արվեստի տեսության հիմքերը: Բնույթով եզակի է <<Հայ գիրքը և տպագրության արվեստը>> աշխատությունը, որը ներկայացնում է հայ ժողովրդի ստեղծած գրքային-մատենային հարուստ մշակույթն ու գրատպության բարձր արվեստը (V-XIX դդ.):

Անժխտելի է Լևոնյանի տպագիր ու անտիպ ժառանգության պատմաճանաչողական արժեքն ու գիտական նշանակությունը: Սակայն նրա ստեղծագործական, գիտական-հրապարակախոսական գործունեության պսակը դարձավ <<Գեղարվեստ>> հանդեսը (1908, Թիֆլիս)՝ հայ առաջին արվեստաբանական պարբերականը, որտեղ տպագրվում էին

արվեստի բոլոր ճյուղերի՝ ճարտարապետության, կերպարվեստի, երաժշտության, պարարվեստի ու թատերական արվեստի վերաբերյալ պատմական ու տեսական, ինչպես նաև գեղագիտության ու արվեստի փիլիսոփայության, գրականագիտության հարցերին նվիրված հոդվածներ:

Գ. Լևոնյանն առաջինն էր, ով Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից արժանացավ հանրապետության արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչման՝ ծննդյան 60 և գրական-մշակութային գործունեության 40-ամյակի առթիվ (1932):

Հարցը Երևանի ավագանու Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությամբ ընդգրկվել էր Երևանի ավագանու չորրորդ նստաշրջանի չորրորդ նիստի (26 նոյեմբերի, 2010) օրակարգում և հանվել օրակարգից՝ առաջիկա նիստերից մեկում քննության առնելու նպատակով:

Նախագծի հեղինակ՝
Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի
մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

Աննա Ասատրյան

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԽՍՀ ԱՐՎԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՀԽՍՀ արվեստի առաջին վաստակավոր գործիչ Գարեգին Լևոնյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Նախագծի հեղինակ՝
Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի
մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ **Աննա Ասատրյան**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԽՍՀ ԱՐՎԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՀԽՍՀ արվեստի առաջին վաստակավոր գործիչ Գարեգին Լևոնյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Նախագծի հեղինակ՝
Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի
մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝
Աննա Ասատրյան